Իսկ տաճարի մէջ բեմի շրթունքի վրայ երկտող արձանագիրը զոր Ջալալեանց այսպէս է արտագրած. «Ցիշեցէք ի Քրիստոս զՋուղայ դաշտեցի Բանդորի որդի ճահան Շահ Վէլի. արդ ես, ծնողն իմ և կողակից հրամանաւ սրբազան Կաթուղիկոսին Էջմիածնի շինեցի, եկի Շամախի առաջնորդ, կանգնեցի զվարագոյր և զբեմն եկեղեցւոյն, ՌՃԻԵ (1676)։

Իսկ ես քանիցս զգուշութեամբ և ճշդութեամբ նայելով հետեւեալ բրուածը գտայ.

«Ցիշեցէք ի Քրիստոս զՋուղայոյ դաշտեցի[1]) Բանդուրի որդի Խոջայ Շահվէլին. որ շինեաց զբեմն և զդուռն յիշատակ համբրէն ննջեցելոցն. թվ. ՌՃԿԶ»։ (1717)։

Այս արձանագիրը քանիցս ստուգել տուի և Բագուայ և Շամախւոյ եկեղեցական գպրոցաց ուսուցչաց։ Այս արձանագրից ներքեւ բեմի ճակատին կայ և ուրիշ արձանագիր, որոյ մէջ հազիւ կարդացվում են Էջմիածնայ Աստուածատուր Կաթուղիկոս և Ջիրուանայ առաջնորդ Պօղոս վարդապետ. թվ. ՌՃԿՍ. (1712)։

---

[1]) Ջուղայու Դաշտ գիւղն է Հին Ջուղայու ներքեւ մեծ կամրջի մօտի տափարակ տեղը «Գիւլիստան» անուանեալն այժմ, որոյ շինութիւնքն ձրգուելեն մինչեւ այժմեան մաքսատան մօտերը, ուր գետինը փորելուս երեւեցան 1881 թուին եկեղեցին և մի քանի շինութիւնքն, ըստ որում Հին Ջուղայն սարերի և ձորերի մէջ է շինուած. ուստի և յիշեալ Գիւլիստանին Ջուղայու Դաշտ են անուանել. ինչպէս և Ագուլիսը ունի իւր դաշտ գիւղը, որ է ներքին Աքուլիսը, և այս և Ջուղայի դաշտը են Այգեստանին, ուր բնակեալ են Ջուղայու և Ագուլեաց երեւելիքն։ Կռունկ Հայոց աշխարհի 1863-ապրիլ. յերես 322։

«Աղբիւր ազգային արդեանց պատմութեան. Յովսէփ Կաթուղիկոսի յիշատակարանից»։

«Ի 1779 ամի, ի Հաշտարխանու ելեալ գնացաք ի Մոսկով և անտի գնացաք ի Պետերբօլք վասն օծութեան չքնաղաչէն եկեղեցւոյն Նորին. զոր կառուցեալ էին Ջուղայու դաշտցի Նղիազարեանց Եղիազար Աղնիւ աղայի որդիքն, Աղնիւ աղա Մինասն և աղա Յովհաննէսն և աղայ Յովակիմն ևն»։